ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 սեպտեմբերի 2023 թվականի N 1666-Ն

ՀԱՆՐԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ) ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԵՎ ԱՅԴ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ՍՊԱՍԱՐԿՈՂ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՈՒ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ, ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆ ԿԱՄ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՓՈԽՀԱ-ՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ, ԱՌԱՆՁԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ՀԱՏԿԱՑՎՈՂ ԾԱՌԱՅՈ-ՂԱԿԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՂ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՔԱՆԱԿՆԵՐԸ, ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԱՌԵԼԻՔԻ, ՅՈՒՂԵՐԻ ՈՒ ՔՍՈՒՔՆԵՐԻ ԾԱԽՍԻ, ԱՎՏՈԴՈՂԵՐԻ ՎԱՋՔԻ, ԿՈՒՏԱԿՉԱՅԻՆ ՄԱՐՏԿՈՑՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ՆՈՐՄԱՆԵՐԸ, ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԵՎ ԱՅԴ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ՍՊԱՍԱՐԿԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՁԵՌՔ ԲԵՐՎՈՂ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պետական գույքի կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի պահանջները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել պետական կառավարման համակարգի մարմինների, Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի, մարզպետների աշխա-

տակազմերի և համակարգը սպասարկող այլ կազմակերպությունների պաշտոնատար անձանց ծառայողական և այդ մարմիններին սպասարկող ավտոմեքենաների հատկացման, շահագործման և տրանսպորտային ծախսերի փոխհատուցման ու առանձին մարմիններին հատկացվող ծառայողական և սպասարկող ավտոմեքենաների սահմանաքանակների սահմանման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեն (այսուհետ՝ կոմիտե) պետական կառավարման համակարգի մարմինների, Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի, մարզպետների աշխատակազմերի և համակարգը սպասարկող այլ կազմակերպությունների (այսուհետ՝ պետական մարմիններ) կողմից ներկայացված առաջարկների հիման վրա սույն որոշման 1-ին կետով հաստատված կարգի համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ իրականացնում է պետական մարմիններին ծառայողական ավտոմեքենաների հատկացման և հաշվառման գործընթացը՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 8-ի N 1403-Ն որոշմամբ սահմանված դեպքերի:

3. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմին՝ վարչապետի կողմից իրականացվող գործառույթների պատշաճ կատարումն ապահովելու նպատակով, բացի սույն որոշմամբ հաստատված հավելվածով սահմանված դեպքերից, ամրացվում է ևս 10 տարբերանշանով սպասարկման ավտոմեքենա:

4. Սահմանել, որ որոշման 1-ին կետով հաստատված կարգի համաձայն պաշտոնատար անձին ծառայողական ավտոմեքենա կամ պետական մարմնի անձնակազմի սպասարկման համար նախատեսված ավտոմեքենա հատկացնելու դեպքում՝ տվյալ պաշտոնյայի կամ մարմնի ղեկավարի նախընտրությամբ ավտոմեքենա հատկացնելու փոխարեն նրա կամ մարմնի լիազորությունների և կանոնադրական գործառույթների իրականացմամբ պայմանավորված տրանսպորտային կարիքների բավարարման նպատակով կարող է հատկացվել տրանսպորտային ծախսերի փոխհատուցում՝ առավելագույնը մեկ ավտոմեքենաների պահպանման

համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված ծախսի չափով:

5. Սահմանել, որ գործառնական և հատուկ նշանակության ավտոմեքենաների սահմանաքանակը համապատասխան պետական մարմինների կողմից ներկայացված հայտերի հիման վրա, կոմիտեի առաջարկությամբ, հաստատվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում:

6. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության ենթակա օտարերկրյա պետություններում գործող առանձնացված ստորաբաժանումների՝ Հայաստանի Հանրապետության դեսպանությունների, միջազգային կազմակերպություններում Հայաստանի Հանրապետության մշտական ներկայացուցչությունների, Հայաստանի Հանրապետության հյուպատոսական հիմնարկների ծառայողական ավտոմեքենաների հատկացման, շահագործման և սպասարկման կանոնակարգը, սահմանաքանակը, չափորոշիչները և վառելիքի, յուղերի, քսայուղերի, ավտոդողերի վազքի և կուտակչային մարտկոցների ծառայության ժամկետների նորմաները Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի առաջարկությամբ հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում:

7. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում հաստատել այլընտրանքային եղանակով տրանսպորտային ծախսերի 2 տարբերակով (յուրաքանչյուր օրացուցային օրվա համար վառելիքի ծախսի չափի սահմանման և տաքսի ծառայության ձեռքբերման դեպքում) փոխհատուցման մեթոդաբանությունը ու այդ մասին տասնօրյա ժամկետում տեղեկացնել համապատասխան մարմիններին:

8. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում մշակել և Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ ներկայացնել՝

1) «Հայաստանի Հանրապետության պետական մարմինների պաշտոնատար անձանց ծառայողական և այդ մարմիններին սպասարկելու նպատակով ձեռք բերվող ավտոմեքենաների յուղերի ու քսուքների ծախսի, ավտոդողերի վազքի, կուտակչային մարտկոցների ծառայության ժամկետների, ինչպես նաև առանձին չափորոշիչները սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը.

2) «Հայաստանի Հանրապետության դատախազության, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի, Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության հանձնաժողովի, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի, Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի, Հայաստանի Հանրապետության կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի, Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի, Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի, Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի, Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի, Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհրդի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի, Հայաստանի Հանրապետության նախագահի, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի աշխատակազմերին ամրացված ծառայողական ավտոմեքենաների հատկացման և շահագործման կարգը, ավտոմեքենաների վառելիքի, յուղերի ու քսուքների ծախսի, ավտոդողերի վազքի, կուտակչային մարտկոցների ծառայության ժամկետները, ինչպես նաև պետական պաշտոն չզբաղեցնող անձանց տրանսպորտային ծախսերի փոխհատուցման կարգը հաստատելու և առանձին չափորոշիչները սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը:

9. Պետական մարմինների ղեկավարներին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝

1) եռամյա ժամկետում իրենց ենթակայությամբ գործող կազմակերպություններում վերջիններիս սեփականությունը հանդիսացող առկա տրանսպորտային

միջոցների սահմանաքանակը, ինչպես նաև իրենց միջոցների հաշվին ձեռք բերվող տրանսպորտային միջոցների գնման գործընթացը համապատասխանեցնել սույն որոշմամբ հաստատված կարգի դրույթներին.

2) չորսամսյա ժամկետում կոմիտե ներկայացնել տեղեկատվություն սույն որոշման կատարման ընթացքի մասին, ինչպես նաև իրականացնել ավտոմեքենաների հասանելի սահմանաչափը գերազանցող տրանսպորտային միջոցների հանձնումը կոմիտեին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ բացառությամբ հատուկ նշանակության ավտոմեքենաների: Ընդ որում, հատուկ նշանակության ավտոմեքենաների դեպքում՝ տրանսպորտային միջոցների հանձնումն իրականացնել սույն որոշման 5-րդ կետով սահմանված գործընթացն իրականացնելուց հետո եռամսյա ժամկետում:

10. Կոմիտեի նախագահին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝

1) եռամսյա ժամկետում պետական մարմինների ծառայողական ավտոմեքենաների հաշվառման գործընթացը բարեփոխելու նպատակով փոփոխություններ և լրացումներ կատարել Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի ապրիլի 28-ի N 562-Ն որոշման մեջ.

2) վեցամսյա ժամկետում սույն որոշման 9-րդ կետով ներկայացված տեղեկատվության հիման վրա Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ ներկայացնել ամփոփ տեղեկատվություն՝ որոշման կատարման ընթացքի վերաբերյալ:

11. Ուժը կորցրած ճանաչել՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 17-ի «Հայաստանի Հանրապետության պետական մարմինների ծառայողական ավտոմեքենաների հատկացման, շահագործման և սպասարկման մասին» N 194-Ն որոշման 1-ի կետն ամբողջությամբ.

2) սույն որոշման 8-րդ կետով նախատեսված աշխատանքները կատարելուց հետո մեկամսյա ժամկետում 2008 թվականի հուլիսի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական մարմինների, պետական հիմնարկների և պետական ոչ առևտրային կազմակերպությունների ծառայողական (բացառությամբ պաշտոնատար

անձանց կամ աշխատողների սպասարկման համար չնախատեսված հատուկ նշանակության) ավտոմեքենաների առանձին չափորոշիչներ հաստատելու մասին» N 830-Ն որոշումը:

12. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

29.09.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ